# ԲՐԱԾՈ ՄԱՐԴԸ ԵՎ ՆՐԱ ԷԿՈԼՈԳԻԱՆ ՀՐԱԶԴԱՆԻ ԿԻՐՃԻ ՔԱՐԱՅՐ-ԿԱՑԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Հ. Ա. ԱԶԻԶՅԱՆ

*Հրազդանի կիրճի ստորին, միջին և վերին պալեոլիթի նյութական բոլոր մնացորդները բացառապես մարդու գործունեությանն են վերաբերում. մարդու բրածո ոսկորները պատկանում են երրորդական ու չորրորդական դարաշրջանին, նրանց տարբեր կուլտուրական շերտերին։ Մեծ մասամբ այդ ժամանակաշրջանին են վերաբերում կայծքարից, թռչաքարերից, ավազաքարերից, բազալտից, պորֆիրիտից, վանակատից պատրաստված զանազան գործիքները՝ մուրճեր, բրիչներ, դանակներ, կացիններ, սղոցներ, քերիչներ, տրորիչներ, ձեռքի հատիչներ, սրածայրեր։ Այդպիսի գործիքներով համեմատաբար ավելի հարուստ են Հրազդանի կիրճի անձավներն ու Արարատյան դաշտում հայտնաբերված բաց կացարանները։ Քաղաքի տարածքում նման քարայր-կացարանների առկայությունը հազվադեպ է[1]։ Հրազդանի կիրճի անձավները և Ազատ գետի կիրճի լավային ու մասամբ կարստային (ղոռադարա) քարայրները մի տեսակ քարեդարյան թանգարաններ են, որոնցում գտնվել են նախնադարյան մարդու բրածո մնացորդներ ու գործիքներ, ինչպես և առ այսօր տարածված, մարդուն հատուկ, վտանգավոր հիվանդությունների օջախներ։*

*Հայկական լեռնաշխարհը հիմնականում առաջացել է կայնոզոյան դարաշրջանի երրորդական ու չորրորդական շրջանի լեռնակազմական պրոցեսների հետևանքով։ Հրաբուխները նշանակալից դեր են խաղացել բարձրավանդակի ռելիեֆի ձևավորման, նպաստավոր էկոկլիմայի ստեղծման խնդրում, որտեղ ծագել, զարգացել ու ապրել է մարդը։ Հրազդանի կիրճի քարայրաբնակը պարազիտ կենդանիներից՝ «սիմբիոտիկ» կյանքից ազատվելուց հետո, գետի հովտում, անձավի հրապարակում կամ անձավում կառուցել է պարզունակ հյուղակ. այդպիսիների հետքերը կան այսօր Երևան—1, Քանաքեռ—4, Ամո—1 ու Զովունի անձավներում։*

*Հրազդանի կիրճի հրաբխային անձավներում տասնյակ հազարավոր տարիներ առաջ բնակվող մարդուն, կենդանիների ոսկորներին, մարդու պատրաստած գործիքներին ու զենքերին, ապրելակերպին ու միջավայրին, ինչպես նաև այդ անձավներում բուն դրած տղային հետադարձ տիֆի սպոնտան օջախներին մենք անդրադարձել ենք դեռևս 1956 թ.[2]։ Մեզ հաջողվել է Երևան—1 և Ամո—1 անձավներում հայտնաբերել օրնիթոդորոսների ու միջատների խիտինային մնացորդներ միջին և վերին պալեոլիթյան շերտե-*

---

[1] *Հայտնի է նաև Ֆրանսիայի Դորդոն* (Dordogne) *քաղաքի Վեզերի հովտի Լե Մուստիե* (Le Moustier) *անձավը, որտեղ հայտնաբերված է 15—16 տարեկան նեանդերթալյան պատանու կմախքը կքված վիճակում։ Տե՛ս* Г. Ф. Буттель-Реепен, Из истории происхождения человечества (первобытный человек до и во время ледниковой эпохи в Европе), М., 1913, с. 54.

[2] Г. А. Азизян, Новые очаги клещевого возвратного тифа в Армении, «Сборник научных трудов Арм. гос. заочного пединститута», 1956, № 3, с. 103—110.

ից և բրածո մարդու իրանի, վերջավորությունների ոսկորներ ու գանգ, նրա պատրաստած քարե գործիքներ, ինչպես նաև կաթնասունների, թռչունների ոսկորներ։

Անհրաժեշտ է նշել, որ դեռ մարդու գոյությունից միլիոնավոր տարիներ առաջ և առ այսօր քարայրները հանդիսանում են որոշ հիվանդությունների ծխացող օջախներ։ Ornithodoros verrucosus տիզը անձավներում հոմինիդի հետ համատեղ գոյություն է ունեցել միլիոնավոր տարիներ։ Կարճ ժամանակում հոդվածոտանին մեծ քանակով արյուն է ծծում։ Հայաստանի լեռնաբնիկների մարմնի խիտ մազածածկույթը խոչընդոտել է օրնիթողորոսներին արագորեն կպչել վերնամաշկին ու ծծել արյունը, մարդը կարողացել է մազերի վրա ոչնչացնել նրանց մի մասը։ Պահպանվել են այդ տեսակի արագ արյուն ծծող ձևերը (նկ. 1)։

Հոմինիդի էկոլոգիական միջավայրի համար կարևոր են քարայրի առաստաղի, պատերի վրա ջրի կաթիլներից անջատված ու կուտակված սառչող գոյացությունները։ Երևան—2 քարայրում առկա են փոքրիկ սյունակերպ ստալակտիտներ 4—5 սմ երկարությամբ, պտկաձև ստալակտիտներ, որոնց կենտրոնում գոյացած անցքերից ջուր է կաթում, ինչպես նաև սանրաձև ստալակտիտներ։ Կարբոնատները և հալիտները հոսելով քարայրում գտնվող ոսկորների և բույսերի վրա, նպաստում են նրանց արագ ֆոսիլիզացմանը։ Այդ աղային գոյացությունները, շրջապատելով տերևացողունային մամուռները, առաջացնում են մինչև 5 սմ երկարությամբ տրավերտինակերպ ճյուղավորված գոյացություններ։ Հրազդան և Ազատ գետերի կիրճերի որոշ անձավներում ստորերկրյա ջուրը դուրս է գալիս մակերես և գոլորշիները, հագենալով հալիտներով ու այլ աղերով, առաջացնում են մեղմ էկոկլիմա, որը դրական ազդեցություն է թողնում վերին շնչական ուղիների հիվանդություններով տառապողների վրա։

Հրաբխային լավայից երոզիոն, սուֆոզիոն, էոլեային, անթրոպոգեն, փլվածքային և հեյզերյան ճանապարհով առաջանում են տարբեր ձևերի քարայրներ։ Հայաստանի քարայրները ավելի հաճախ համակցված ծագում ունեն։ Անգյուտ է Քանաքեռ—4 երկհարկանի, երեք խուցերով անձավը։ Քարայրների պալինոլոգիական անալիզը ապացուցում է, որ պատմական անցյալի չորրորդական դարաշրջանում Երևան—1, Ամո—1 և Զովունի անձավների բաց լանդշաֆտում էկոլոգիական տեսակետով գերակշռել են կիսաանապատային խոտազգի քսերոֆիտներ, ուր գոյություն է ունեցել նաև մեզոֆիլ կնձի։ Ավելի խոր շերտերում հանդիպում են խիստ ցրտադիմացկուն փշատերև ծառատեսակներ, ինչպես և բաց տարածություններում ու անտառներում բնակվող կենդանիների մնացորդներ։

Մշակութային շերտերի նստվածքների բնույթով որոշվել է անձավների և շրջակայքի մոտավոր պալեոէկոլոգիան՝ ցուրտ, կիսացուրտ, բարեխառն, չոր և տաք։ Հայտնաբերվել են կայնոզոյան դարաշրջանի 10 միլիոն տարուց էլ վաղ գոյություն ունեցող սարմատներից քարացած ծովային սպունգներ, շճյուղավորված, խուցեր գոյացնող գաղութավոր կորալներ, փորոտանի փափկամորթներ։ Զովունի քարայրում գտնվել է քարացած Hexacorall, որը ապրել է +18—20°C միջավայրում, 50—60 մետր խորություն ունեցող ծանծաղուտներում։ Ամո—2 քարայրից հայտնաբերվեց քարացած Natica sp., սաղաֆաբեր փորոտանու տհաս ձևը (Juvenis)։

Ուսումնասիրված 15 քարայրներից 12-ում հայտնաբերվել են հոմինիդի գործունեության հետքեր, որոնցից 8-ում գտնվել են օրինթոդորոս տղեր, իսկ 5 անձավում՝ տզային հետադարձ տիֆի գործող վտանգավոր օջախներ. Երևան—1 անձավի խոր, մշակութային շերտերից մեկում հայտնաբերվել է նախնադարում քաղցրահամ ջրերում ապրող բադյագա սպունգի կայծքարային կմախքը։ Այդ տեսակը այսօր ապրում է Մեծամոր լճում (այժմ Ակնալիճ) և Եղվարդի աղբյուրներից սկիզբ առնող գետակում։

Նկ. 1

Մարդը Հրազդանի կիրճի անձավներն օգտագործել է իբրև բնակարան, քարից գործիքներ պատրաստելու «արհեստանոց», որսակայան, թաքստոց, դամբարանադաշտ։ Օրինակ, Ամո—1 անձավին կից Կարմիր բերդ հրվանդանի բրոնզեդարյան, ապա և միջնադարյան բնակատեղիում, հնարավոր է նաև քարե

Նկ. 2

դարում, հանգուցյալները երբեմն թաղվել են քարայրում։ Պարզվում է, որ վաղ, զարգացած և ուշ միջնադարում որոշ քարանձավներ օգտագործվել են իբրև սրբավայր-մատուռ։ Այդպիսին է Քանաքեռի հիդրոէլեկտրակայանի մոտ գտնվող անձավը։ Դրան կից մեկ ուրիշ անձավ դրսից ունի առանց շաղախի բազալտից շարվածք, բարձր կիսաքանդ պատ և գետնափոր դաղտնի դոնակ։ Կարելի է ենթադրել, որ անձավը հայ բնակչության համար վաղ դարերում թաքստոց է եղել (հատկապես XIV—XVIII դդ.) զանազան նվաճողներից խուսափելու համար։ Քարայր-թաքստոցին կից հսկա որձաքարի վրա փորագրված են յոթ անհավասարաթև խաչեր, որոնք բավականին լավ են պահպանվել։ Քարից 3 մետր հեռավորությամբ գտնվում է քրիստոնեական պաշտամունքի քարայր-մատուռը, որի դրսի և ներսի պատերի վրա փորագրված են հասարակ, հավասարաթև՝ հավանորեն հունական ու անհավասարաթև՝ թերևս բյուզանդական ու լատինական, ինչպես և գեղեցիկ զարդաքանդակներով 30 խաչեր, որոնք բացահայտում են դրանց զարգացման պատմությունը։ Հավասարաթև խաչերից մի քանիսը համարյա հողմնահարվել են։ Քարայր-մատուռը բաղկացած է երեք խուցերից, որոնց միջնապատերի շարվածքը դարձյալ առանց շաղախի է։ Ժողովուրդը գաղտագողի խունկ է ծխել քարայր-մատուռի երրորդ խցիկի՝ սրբարանի կրակարանում։ Հաղիս լեռան

լանջին առկա է մեկ ուրիշ քրիստոնեական քարայր-մատուռ, որի ճակատային հատվածում փորագրված են անհավասարաթև խաչեր։

Հայկական լեռնաշխարհի նախաբնիկների օրրաններից մեկի՝ Հրազդանի կիրճի Զովունի քարայր-կացարանի առաստաղից և մասամբ հատակից պեղվել են մարդանման էակի՝ մասամբ մանգանի դենդրիտներով (սև լաքաներով ծածկված, որը բնորոշ է նախնադարյան՝ խիստ վաղեմի ոսկորներին) պատված, ֆոսիլիզացված և հիպերտրոֆիայի ենթարկված գանգի մախաթաձև ելուստ, անրակոսկր, կրծոսկր, կողոսկրներ, սրբանոսկր, մատների ծայրային կարճ և հաստ ֆալանգներ՝ նման նեանդերթալյան մարդու ծայրանդամներին, ինչպես և բաղմաթիվ քարացած երկար ոսկորներ, բուսական ծագման ֆիտոլիտարիաներ, երկարավուն խողովակաձև գոյացություններ՝ աբիոգեն-տրավերտին և գունավոր մերգելներ (նկ. 2)։ Առաստաղից պեղվել է բիոգեն՝ անելիգ քարացած որդերի մնացորդներ, որոնք բնորոշ են տաք և ծանծաղուտ ջրավազաններին։ Հանքային, կալցիումային ծագումով ցանցաձև շլիռները (երականման հոսքեր) թափանցել են քարայրի առաստաղից կախված անդեզիտա-բազալտի հսկա գոյակցությունների արանքները։ Առաստաղից պեղվել է քսենոլիտ՝ անդեզիտա-բազալտի մի հատված, որի մեջ առկա է բավականին երկար խողովակաձև (ossa longa s. tubulosa) ոսկոր. հավանորեն այն արդեն իսկ նախքան հրաբուխը քարացել էր, պահպանելով իր սպիտակ գույնը, հակառակ դեպքում ոսկորը հրահեղուկ լավայի 1500—2000° ջերմությունից անմիջապես կածխանար։ Դրանց կից գտնվել են՝ եղջերուի քարացած եղջյուրներ, նապաստակի թաթոսկր, արծվի թաթի ֆալանգն իր ճանկով։ Զովունի քարայրի մուտքի հրապարակի հումուսի շերտից պեղվել է անտիկ ժամանակի խունկ ծխելու ընկուզաձև կավե թրծած խողովակ, միջնադարյան առաջին շերտից՝ ամպագույն ջնարակով երկու ձեթի ճրագ (նկ. 3), երկրորդ շերտից, որից ցած նախահրազգանի հունն է, պեղվել է թափանցիկ վանակատի երկարավուն մի թիթեղ, որի թիկնամասը մշակված է ու կրային նստվածքով պատած, սուր ծայրը օգտագործման հետքեր ունի։ Գործիքը միջին պալեոլիթի՝ մուստիեի դարաշրջանին է պատկանում։

Հայտնագործված նյութերը հնարավորություն են տալիս նախաբնիկների հեռավոր անցյալի էկոլոգիան ուսումնասիրելու համար։ Անձավում առկա է Հրազդան գետի նախկին հունի, պալեոհրազդանի հետքը։ Միաբջիջ ջրիմուռների պատյանների, ֆիտոլիտարիաների, ինչպես և որձաքարի մեջ ներառնված ոսկորի ֆրագմենտի հայտնագործումը Զովունի անձավում խոսում է այն մասին, որ տվյալ լանդշաֆտում, նախքան չորրորդական հրաբուխը, հավանաբար Զարենցավանի կողմից, հոսել է պալեոհրազդանը, ինչպես և այն, որ այդ վայրերում արդեն իսկ բնակվել են մարդանման էակներ։

Բավականաչափ նյութեր են հավաքվել տեղի լանդշաֆտի ֆլորայի վերաբերյալ։ Քարայրաբնակ մարդուն շրջապատող բուսականությունը օգտագործվել է որպես պտուղ, համեմունք, ախորժակաբեր, եթերայուղ, ֆիտոնցիդ, ճիճվամուղ, արյան ճնշումն իջեցնող, ցավազրկող և այլն։ Վայրի դեղաբույսերի բուժական հատկությունների իմացությունը, հավանաբար, շումերներից փոխանցվեց բաբելոնացիներին, արմեններին, ասորեստանցիներին. եգիպտացիները և հույները փոխ առան նրանց փորձը, ներդրեցին նաև իրենց գիտելիքները և հիվանդությունները բուժելու իրենց սկզբունքները։ Հրազդանի կիրճի որոշ հատվածներում աճող յավշան բույսը (Artemisia

erivanica Grossh) իր հելմինտոցիդ նյութերով հողում ոչնչացրել է մարդու և կենդանու պարազիտ որդերին։ Հայաստանում չի բուսնում կյանքի արմատ (ժենշեն) բույսը, սակայն կյանքը երկարացնելու հատկությամբ է օժտված որոշ անձավ-կացարաններում և նրանց շրջապատում բուսնող լոշտրակը (Bryonia alba L.)[3]։

Զովունի անձավում պեղված ուշ միջնադարյան կճուճի մեջ պանրի սոխուկի հետքը, ինչպես և քարայրի հումուսի շերտի մեջ գոմաղբի առկայությունը (բասմա) վկայում են տեղաբնիկների անասնապահությամբ զբաղվելու մասին։ Այսօր Զովունի քարայրի շրջակայքում անհայտ ժամանակներից բուսնում է գետնախնձոր պալարապտուղը։ Այդ բույսը Հայաստանում հայտնի է դեռևս մ. թ. V դարից՝ Մովսես Խորենացին այն անվանում է «տոմալան», իսկ Ամիրդովլաթ Ամասիացին 1484 թ. գրել է, որ գետնախնձորը մարդու վրա առողջարար ազդեցություն է թողնում։ Զովունի քարանձավում բրածո մարդանման էակի ֆոսիլիզացված կրծոսկրի վրա նկատվում է բորբոքային երևույթների հետևանքով առաջացած ներծծում։ Ոսկրային հյուսվածքի բորբոքման երևույթների հետևանքով սրբանոսկրի ձախ կողմում նկատվում է ապաճում և քայքայում։

Ամո—1 քարայր-կացարանում մարդու գործունեության հետքերը նոր քարի դարից ավելի՝ վաղ են, նրանք հասնում են ուշ քարի դարին, գուցե և ավելի վաղ՝ միջին պալեոլիթին։ Կացարանի հրապարակից հայտնաբերվեց զարգացած աշելյան ժամանակի բարձր տեխնիկայով, սև վանակատից պատրաստված, քարայրում լավ պահպանված ձեռքի եզակի նշակերպ բիֆասհատիչ։ 150—177 սմ խորության վրա հայտնաբերվեց երկու շերտ՝ մեկի վրա առկա է ուժեղ հարվածի թմբիկ։ Մյուս շերտը ունի լայն հարվածի հրապարակ։ Պեղվել է և մեկ փոքրիկ կտցակերպ ծայրով, երկկողմանի հազիվ նըշմարելի ֆասետներով գործիք։ Քարի դարի մասնագետների կարծիքով այդ վանակատե փոքրիկ գործիքները, որոնք անձավում մարդու գանգի ու կմախքի բարձրության վրա են գտնվել, պատկանում են վերին քարի դարին. հավանաբար նույն դարաշրջանին պետք է վերադրել նաև ոսկրանյութը։ Մարդու կմախքի ոսկորները պատված են մանգանային սև գույնի ղենտրիտներով, որոշ ոսկորներ արդեն ֆոսիլիզացվել են, ատամնաշարը ունի մի քանի արխաիկ հատկանիշներ՝ տղամարդու ստորին ժանիքը երկարմատ է ու մասսիվ, ստորին երկրորդ նախասեղանատամի էմալային կամրջիկը կապում է վեստիբուլար և լինգվալ թմբիկները, հիպոկոնուսը խիստ զարգացած է, պրոտոկոնուսի գիստալ էլեմենտը նույնպես զարգացած է։ Դեմքը նեղ է, պրոգնատիզմը՝ լավ արտահայտված, ճակատը պառկած։

Քարի դարում անձավում մարդ է ապրել, իսկ ավելի ուշ այն դարձել է դամբարանադաշտ։ Ամո—1 քարայրի 45 սմ խորության շերտից պեղվել է բազալտե նշաձև, հսկա, եզակի հատիչ, մակերեսները համարյա հարթված ջրի հոսանքի պատճառով, մշակման հետքերը հազիվ են նշմարվում, գործիքը շելյան դարաշրջանի է։ Այդ քարայրից պեղված ոսկորների ախտաբանա-պալեոռենտգենոգրաֆիական պատկերը ցույց է տալիս ուսահոդի և թիակի անկիլոզ-անշարժացում և դեֆորմացիա, անհավասարաչափ սկլերոզ, նույնը ցույց է տալիս ռենտգենը նախաբազկի և անրակի վրա։ Քարայրում պեղված վերին պալեոլիթյան տղամարդը տառապել է օստեոմիելիտով (ոսկ-

[3] А. Л. Тахтаджян, А. А. Федоров. Флора Еревана, Л., 1972, с. 107.

ների թարախահոսություն), ունեցել է կարիոզ ատամներ[4]։ Ամո—1 քարայրից պեղված կնոջ վերին ծնոտի կարծր քիմքում Foramen incisivum-ը բացվում է մեկ անցքով, քթի տանձաձև բացվածքների կողմից անցքերը զույգ են, որտեղով անցնում է եռարմատ ներվը։

Երևան—1 քարայրում հայտնաբերվել են մեծ թվով գործիքներ և ավելի քիչ թվով տաշեղներ, ծլեփներ, միջուկներ, շեղբեր։ Այս քարայրը հումքի աղբյուրից հեռու է ընկած, հետևաբար քարայր-արհեստանոցում պատրաստված գործիքները դաշտ են տարվել որսի և այլ նպատակներով ու նորից հետ բերվել (նկ. 4)։ Որպես գործիքներ օգտագործվել են նուկլեուսներն ու մյուս թափոնները։ Երևան—1 կացարանում հայտնաբերված հյուղակը կենտրոնում



Նկ. 3



Նկ. 4

ունի օջախ, որի ածուխի հասակը ռադիոածխածնային եղանակով որոշվել է 48 հազար տարի։ Քարայրում պեղվել են ռնգեղջյուրի, քարանձավային արջի, իշայծյամի, վայրի ցուլի ոսկորներ. վերջինս հայտնաբերվել է մի քանի կուլտուրական նստվածքներում և Հայաստանում ապրել է մինչև բրոնզի դարի վերջը։ Ռնգեղջյուրը սովորաբար ապրել է տաք և ճահճոտ վայրերում և հանկարծ երևացել է Հայկական բարձրավանդակում, լեռնային բեզոարյան այծի հետ[5]։

Արմենոիդի վաղուց սկսված ձևաբանական կազմավորման պրոցեսը մ. թ. ա. IV, III և II հազարամյակներում արդեն բավականաչափ առաջադիմել էր։ Այդ տեսակետով նրա տիպը՝ մուգ մաշկը, ասուրական մորուքը և հատկապես մարմնի խիտ մազածածկույթը, գլխի մազերի մուգ գույնը և շափավոր գանգրությունը, քթոսկրերի բարձրությունը, առաջքթային փուշը, տանձաձև բացվածքի ձևը սահմանազատվում էր այլ ֆիզիկական կերպարներից։ Հավանորեն նեոլիթում (մ. թ. ա. VI—III հազարամյակ) լեռնաշխարհի տոհմական համայնքները կապված են եղել միմյանց հետ. նրանց մոտ զարգացած էր ուռեգործությունը, մանածագործությունը, բրուտագործությու-

[4] Д. Г. Рохлин, Болезни древних людей. М.—Л., 1965, с. 278—281.
[5] Н. К. Верещагин, Млекопитающие Кавказа, М.—Л., 1969, с. 430.

նը. ավազախառն կավից պատրաստում էին պարզունակ ամաններ, նախշում պարզ զարդանկարներով ու թրծում։ Պալեոլիթյան քարե սլաքը նոր քարի դարում փոխեց իր ձևը, նմանվելով ծայրապանակի, ամրացվեց նետի ծայրին՝ վերածվելով որսորդական ու մարտական հեռահար զենքի մի մասի։ Հայկական բարձրավանդակի տեղաբնիկները, գուցե և նոր քարի դարից էլ վաղ, իրենց մշակույթով ու մարդաբանական տիպով կազմեցին մի ամբողջականություն, որն անհերքելիորեն ապացուցված է Շումերում հայտնաբերված արձանիկների բեկորներով, եգիպտական հուշարձանների վրա նկարված խեթարմենոիդ գերի ստրուկների ու նրանց գործունեության պատկերներով, փարավոնների դամբարաններում նշված ստրուկ խեթերի և արևելահայաստանյան երկարագանգ ու կարճագանգ մարդկանց դամբարանների պեղումներով[6]։

Հայերի մարդաբանական տիպի հետ իրենց մորֆոլոգիական որոշ հատկանիշներով առնչվում են Սևանա լճի առափնյա հատվածներում շուրջ 2000 տարի առաջ ջրի տակ անցած գամբարանաբլուրներում գտնված, տարբեր ցեղախմբերի ոսկրաբանական նյութերը։ Դամբարանաբլուրները կառուցվել են բազալտե սալերով, նրանց խորությունը 3 մ է, լայնքը 3 մ, երկարությունը 8 մ։ Կան և ավելի փոքր կրոմլեխներ։ Դամբարանաբլուրներում գտնվել են երկանիվ ու քառանիվ, փայտե, հինարևելյան տիպի սայլեր, եռագույն զարդաքանդակներով ու երկրաչափական գծանկարներով, խմիչքի, ճաշի և ծեսի հետ կապված կավե թրծած սափորներ, ափսեներ։ Պեղվել են ոսկե զարդաքանդակներով, պարանոցը գրկող մանյակ, ձեռքի օձագլուխ ապարանջան, քարազարդ ճարմանդներ, ոսկե կոճակներ։ Դամբարանաբլուրներից մեկում հայտնաբերվել է գորտի ոսկե կաղապար, ինչպես նաև բազմաթիվ սափորների մեջ գտնվել են գորտերի (Rana esculenta l.) ազդոսկրերի մնացորդներ, որոնք որպես սնունդ դրվել են հանգուցյալի հետ. հավանաբար գորտը եղել է պտղաբերության ու անձրևի հետ կապված պաշտամունքի առարկա, ինչպես Ասորեստանում պապիրուսի և ջրի հետ կապված մորեխը, որը հրամցրվում էր որպես գրավիչ ուտելիք[7] (նկ. 5)։

Մեծ դամբարաններից մեկում թաղվել են մինչև 12 մարդ։ Հայտնաբերվել է մեկ խոշոր դանդ, տեղավորված սայլի առջևում, որ հավանաբար ցեղապետինն է և կնոջ ու երեխաների, իսկ սայլի հետին մասում՝ ստորադրյալների (ծառաների, ստրուկների) դանգեր։ Մի քանի կմախքներ ծածկված են կարմիր կավաքարով (օխրա), իսկ որոշ դամբարաններում գտնվել են միայն գանգեր, որ հավանորեն կապ ունի որևէ ծեսի, պաշտամունքի կամ հանցագործության հետ։ Տոտեմիզմի հետ կապված, դամբարաններում թաղվել են միասմբակ և երկսմբակ, ինչպես և գիշատիչ կենդանիներ. այսպես. Լճաշենում ցեղապետերի ու այլ իշխանավորների հետ զոհաբերվել են մեծ քանակությամբ ձիեր, էշեր, խոշոր ու մանր եղջերավոր անասուններ, խոզ, շուն։

Սևանի գանգաբանական նյութերն ու մշակույթը կապված են Առաջավոր Ասիայի մշակույթի պատմության ու մարդաբանության հետ, որը իր հերթին համեմատվում է Արևելյան Եվրոպայի բրոնզի և վաղ երկաթի (մ. թ. ա.

---

[6] В. В. Бунак, Crania armenica. Исследование по антропологии Передней Азии. М., 1927, с. 198—207.

[7] И. А. Порчинский, Паразиты саранчи, прусака и вредных видов кобылок из мира насекомых, СПб, 1914, с. 67.

XI—IX դդ.) դարաշրջանների հուշարձաններից պեղված գանգաբանական նյութերի ու հանույթի հետ։ Լճաշենից պեղվածները երկարագանգ են, միջին ցուցանիշը՝ 72, վերհոնքային աղեղները լավ արտահայտված, կամարների ուռուցքները ներսի կողմից թանձրավուն, այտոսկրները չափավոր դուրս ցցված, ճակատային հատվածի մատնապճերից երևում է, որ ուղեղի առջևի մասը թույլ է եղել զարգացած։ Պեղածոների մեջ գերակշռել են տղամարդ-



Նկ. 5

Նկ. 6

կանց ոսկորները, կան և պատանիների ու ծերերի։ Գանգերը ամբողջական են, դեմքը բարձր, միջին լայնության, ակնակապիճները կլոր և բարձր, ծոծրակային արտաքին թմբիկը արտահայտված, այն որոշ չափով սեռը բնորոշող հատկանիշ է։ Ստորին ծնոտը հաստ է, թևերը երկար են։ Դամբարաններից մեկում հայտնաբերվել է գանգին կպած սև մազ, պետրոֆիկացված փոքր դանդուղեղ։ Առաջնաեռին—սագիտալ գծանկարները ցույց են տալիս գանգատուփի ձևն ու մակերեսը, գանգերը մեծ մասամբ համաչափ են, ատամնաշարը լավ պահպանված՝ խոշոր, ոմանց մոտ իմաստության ատամները բացակայում են։ Կրոմլեխներից մեկում պեղվել է 20—25 տարեկան տղամարդու գանգ, որի կաթնատամները պահպանվել էին, իսկ մեկ այլ դամբարանում պեղվեց մի գանգ, որի մոտ չնայած կաթնատամները թափվել էին, սակայն վերջնական ատամները նույնիսկ չէին ծլել։ Սևանի ավազանից պեղվածները մեծ մասամբ երկարագանգ—ուղղագանգեր են, քթային միջին ինդեքսը 49, կան և ավելի բարձր քթերով։ Բարձրահասակ են, գլուխները խոշոր, գանգի ոսկորները մասսիվ, կմախքի ոսկորները թանձր, ձեռքերն ու ոտքերը՝ երկար։

Դամբարաններից ու անձավներից պեղված մարդաբանական նյութերը վկայում են, որ Հայաստանի տարածքում բնակվող տեղաբնիկները իրենց օնտո-ֆիլոգենեզով առանձնահատուկ տեղ են գրավում Առաջավոր Ասիայի հարավային եվրոպեոիդ ռասայի շարքում։ Արմենոիդների քթի տանձաձև անցքի եզրերի ոսկորները սուր են՝ մեծ մասամբ գերակշռում է անթրոպինա ձևը, սակավ՝ ինֆանտիլ։ Գանգերը մեծ մասամբ պենտագոնոիդ, սակավ՝ էլիպսոիդ ու օվոիդ են, ճակատային հատվածը ցածր է, գանգի միջին տարողությունը 1500 սմ³ (նկ. 6)։

Սևանի ավազանի մարդաբանական տիպը, ինչպես նաև միջերկրածովյան առաջավորասիական արմենոիդ տիպը, խիստ հին է։ Վերջինս իր էթնոգենեզով միջերկրականի ավազանում շատ ավելի վաղեմի է, քան մի քանի եվրասիական ցեղեր՝ թրակացիներ, հելլեններ, իրանցիներ և այլն, որոնք համենայնդեպս ասիմիլյացիոն ազդեցություն չեն գործել արմենների վրա։ Մարդաբան Լուշանն առաջինն էր, որ զուգահեռներ անցկացնելով եգիպտական, խեթական, հունա-հելլենական, արաբա-բյուզանդական, Մերձավոր ու Միջին Արևելքի ասուրական բարձրաքանդակների մարդկային պատկերների և ժամանակակից հայերի միջև՝ Առաջավոր Ասիայի այդ տիպը անվանեց հայակերպ՝ Armenoid, որը օժտված է խեթերին բնորոշ մի քանի հատկանիշներով։ Նա նկատի ուներ մարմնի մազածածկույթն ու մորուքը, գանգի ձևն ու քթի բարձրությունը։ Վաղ միջնադարում Հայկական բարձրավանդակում կլորագանգությունը ավելի ցայտուն է դառնում։ Կլոր գանգի ձևավորման խնդրում էթնիկ սովորույթները, գենետիկան, էկոլոգիական կոմպլեքս միջավայրը որոշիչ գործոններ էին։

Պրոֆեսոր Վ. Վ. Բունակը 1927 թ. հիմնավորեց հայերի անթրոպոլոգիական տիպի ծագումն ու ազգային կազմավորման պրոցեսը, որոշեց նրա տեղը մարդաբանական տիպերի ու ռասաների շարքում։ Նա փաստեր է բերում ապացուցելու այդ տիպի խիստ նախնադարյան, առաջավորասիական կամ, ինչպես ինքն է անվանում, «պոնտո-զագրոսյան» տիպ լինելը[8]։

Փոքր Ասիայում, Զինջիրլիի Բողազքյարի պեղումները կատարող պրոֆեսոր Լուշանը իր աշխատանքում (1911) գրում է. «Արմենների մարդաբանական տիպը առաջացել է Անատոլիական բարձրավանդակի այդ հնադույն ժողովուրդներից»[9]։ Նա բերում է նկարագրական փաստեր պատկերներով։ Խեթերից հարավ-արևելք, Ասորեստանում պեղված գանգերը դասակարգելով, ռասայագետ Դենիկերը դրանք անվանեց հայերի ասիրոիդ մարդաբանական տիպ։ Նկարում պատկերված խեթի գոտու վրա կախված է խաղողի ողկույզ և նուռ։ Թագավոր Ասսուրնասիրպալը, որ տիրել է մինչնինվեյան թագավորությանը (մ. թ. ա. II հազարամյակի սկիզբ)՝ խեթ է։ Ասորեստանի թագավոր Ասսուրբանիպալի (մ. թ. ա. 667—647 թթ.) նկարում պատկերված կարճագլուխ, գրացիլ տիպի, ասուրական մորուքով, խիստ մազապատ դեմքերով երկու մատուցողները խեթեր են (տե՛ս նկ. 5)։

Բաբելոնյան դիմաքանդակներում հանդիպում են թագավոր Մորդուխ-Նադիի (մ. թ. ա. II հազ. սկիզբ), թագավոր Ուր-Նինայի պատկերները. սափրած դեմքով, արծվաքիթ, պառկած ճակատով այդ մարդիկ արմենոիդ են։ Մո-

[8] В. В. Бунак, նշվ. աշխ., էջ 221—224։

[9] Տե՛ս R. Kherumian, Introduction a l'anthropologie du Caucase. Les Arméniens, Paris, 1943, p. 263.

տավորապես մ. թ. ա. 2600 թ. Գուդեա թագավորի ժամանակվա սեմական տիպերի (պեղածո) ճակատը ուղիղ է, քիթը բարակ, գլուխը կլորավուն։ Մարդաբանական այդ տիպը ևս խիստ վաղեմի է, բայց հավանաբար առնչություն չունի արմենոիդի հետ։ Մյուս պեղածոն արմենոիդ է, ուժեղ արտահայտված քթով, ծոծրակը տափակ, ճակատը պուկած։

Հայկական լեռնաշխարհի, հայ ժողովրդի մշակույթը հնագույն ժամանակներից սերտորեն կապված է եղել հինարևելյան, հունա-հելլենիստական, իրանական և մյուս քաղաքակրթությունների հետ, սակայն եթե արմենոիդին համեմատենք աքեմենյան պարսիկի հետ, ապա կտեսնենք, որ վերջինիս հասակը համեմատաբար կարճ է, գլխի մազածածկը խիստ գանգուր, քթի ստորին հատվածը ծուռ։ Պարսիկներից առաջ Իրանի տարածքի մի մասում (Էլամում) ապրել է հավանաբար տեղաբնիկ ցեղ՝ օժտված արմենոիդի հատկանիշներով. նրանք մինչհելլենական շրջանում ապրել են նաև Միջերկրական ծովի որոշ կղզիներում և մասնավորապես Հելլադայի հարավային մասում։ Լագաշում պեղվել են շումերական, արխաիկ, իրար նման երկու գլուխներ։ Գառնիում անտիկ դամբարաններից մեր պեղածոները երկարագանգ են, միջնադարյանները՝ կլորագանգ։ Պեղվել են և Երկհարկանի դամբարաններ՝ առաջին հարկում հայտնաբերվել են երկարագանգ, իսկ երկրորդում՝ կլորագանգ մարդկանց կմախքներ։ Միջնադարյան գանգերը առաջավորասիական գրացիլ տիպի են՝ ծոծրակը տափակ, դեմքը նեղ ու բարձր, ակնակապիճները ու քիթը՝ բարձր։ Սենգավիթի էնեոլիթյան դամբարաններից պեղված գանգերի ակնակապիճները կարծես քառակուսի են և մասամբ կախ, դեմքի դուրս, ճակատոսկրը բավականին լայն, թեքությունը փոքր, գանգատուփը երկար, դեմքը բարձր, լայնությունը միջին։ Հավանաբար, այստեղ ապրել են կրոմանիոիդի հատկանիշներով օժտված տեղաբնիկներ, որոնք մոտենում են Անդրկովկասում ու Առաջավոր Ասիայում պեղված նմուշներին, ինչպես և ժամանակակից հայերի որոշ տարբերակներին։ Տիպաբանական տեսակետով Արևելյան Վրաստանի նույն ժամանակի դանգերը մոտ են կանգնած Գառնիում պեղված բավականին բարձր գանգերին. մեր ուսումնասիրած գանդերի դեմքի բարձրությունը ավելին է։

Հրազդանի կիրճի նախապատմական շրջանի ժայռապատկերները պեղածո մարդու քարե տարեգրություն են։ Քարերը նկարազարդված, փորագրված են գեղեցիկ այծադրերով, որոնցում արտահայտվել են մարդու պատկերացումները աշխարհաստեղծման և տիեզերքի մասին, նրա հավատալիքները, կենցաղն ու աշխարհընմբռնումը։

Հնագույն Հրազդանի կիրճի ուսումնասիրությունը նոր է սկսվել, բայց այն, ինչ արդեն պարզ է գիտության համար, մասամբ լույս է սփռում Հայկական լեռնաշխարհի բնիկների այդ ռեգիոնի տնտեսական կյանքի, կրոնի, մշակույթի և սովորությունների վրա, որոնք գոյություն են ունեցել մինչ քրիստոնեությունը և քրիստոնեությունից հետո։ Այսօր արդեն Հրազդանի կիրճում հայտնաբերված են սակավաթիվ խորաքանդակներ. տուֆ քարի վրա փորագրված են սկավառակաձև յոթ ուռուցիկ և հինգ գոգավոր ճառագայթներ, որոնց նշանակությունը առայժմ դժվար է բացատրել։ Մեկ ուրիշ տուֆի վրա քանդակված են վագր, մարդ և արևը իր ճառագայթներով։ Հսկա տուֆե ժայռաբեկորի երկու կողմերում կան կենդանուն կապելու անցքեր, փորված զոհասեղանի վրա սուր գործիքով այծապատկեր է արված, որը գուցե մարդու

առաջին փորագրություններից է։ Մեծ կարմիր տուֆի մոտ հավերժացված է արագիլի պատկեր և այլն։ Այս ամենը հավանորեն նշանակում են, որ այստեղ ապրել են հայերի նախնիները։

Ամփոփելով, կարելի է ասել, որ ներկայումս կարևոր խնդիրներից մեկը պետք է համարել Հայկական լեռնաշխարհի քարայրներում նախնադարյան ժամանակներից եկող ու դեռևս պահպանված, տգային հետադարձ տիպի օջախների իսպառ ոչնչացումը, մասնավորապես՝ Հրազդանի կիրճում։ Տգային սպիրոխետոզը ոչնչացնելով մենք հնարավորություն կունենանք զբաղվելու Հրազդանի բրածո մարդու անձավ-կացարաններում բուն դրած այլ վտանգավոր հրչաեղությունների վերացման հարցերով։

Պետք է ենթադրել, որ բարենպաստ էկոլոգիական պայմանների շնորհիվ պալեոհրազդանի կիրճը, հավանաբար, հանդիսացել է հոմինիդի ծագման, զարգացման, բնակության և նրա ստեղծած մշակույթի բնօրրաններից մեկը։

Երևանի տարածքում Հրազդանի կիրճի որոշ անձավներում շարունակվում են պեղումները, հուշարձանների և բնակավայրերի կուլտուրական շերտերի խոր հետազոտությունները, որոնք անկասկած իրենց պալեոանտրոպոլոգիական նոր հայտնագործություններով կլուսաբանեն հայ մարդու օնտոգենեզի, ֆիլոգենեզի և նրա էկոլոգիական միջավայրի հետ կապված բազմաթիվ չլուծված հարցեր։

## ИСКОПАЕМЫЙ ЧЕЛОВЕК И ЕГО ЭКОЛОГИЯ В ПЕЩЕРАХ-ОБИТАЛИЩАХ В КАНЬОНЕ РАЗДАНА

*Г. А. АЗИЗЯН*

**(Резюме)**

Недалеко от Еревана в каньоне р. Раздан, в пещерах, гротах, нишах и под навесами на разных уровнях нами были обнаружены шелльские, ашельские, мустьерские и верхнепалеолитические изделия. Человек палеолита изготовлял обсидиановые, базальтовые, порфиритовые, кремневые орудия. В пещере Амо-1 найдены два человеческих костяка верхнего палеолита, обсидиановый ашельский бифас-рубило, единственный известный в пределах СССР. В пещере Амо-2 обнаружены порфиритовые и базальтовые орудия (рубило, остроконечники), а в пещере Зовуни—обсидиановая пластинка с выемками.

По-видимому, гоминиды обитали в неантропогенном ландшафте Еревана и до образования четвертичных вулканических пещер, судя по ряду окаменелых костных остатков птиц, животных и человекоподобного существа, выкопанных из свода пещеры Зовуни. Следует подчеркнуть различную степень их фоссилизации: на грудной кости гоминида отмечаются рассасывания, на крестцовой кости с левой стороны—уменьшение костной структуры (лизис). Палеорентгенографическое изучение костного материала из пещеры Амо-1 выявило анкилоз и неравномерное склерозирование плечевого сустава и лопатки; аналогичные изменения определяются на фрагментах костей предплечья и ключицы. У эксгумированного скелета имелся хронический остеомиелит, кариозные зубы.

Опытами по кормлению клещей доказано, что клещ O. verrucosus имеет давние связи с пещерным человеком: в древнепещерных очагах клещевого возвратного тифа в каньоне р. Раздан основным его переносчиком был этот клещ.